

ՏՆՕՐԵՆ - ԽՐՈՒՆԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵՆ	500 ՂՐԵ.
ՎԵՑԱՄՍԵԱՑ	250 "
ԵՌԱՄՍԵԱՑ	150 "

Բաժանորդագրությունները կ'սկսվեն ամեն ամսոյ 1 ին և 15 ին

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՎԱՂԱՔԱԿԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVELIAN MAMOUL, JOURNAL ARMÉNIEN QUOTIDIEN

100 ՓԱՐԱ



ՊՈՂՍԱԿԱՆ ԵՎ ՆԱՄԱԿԱՆԻ

(Մեր մասնաւոր քրակցին)

Կ. Պոլս. 24 Օգոստոս 1919

Պատերազմի տևողութեան ընթացքին Կ. Պոլսոյ բնակչութիւնը յեղող ամենէն ծանր բաներէն մէկն ալ սպորուստի սղութիւնն է: Կեանքը այնքան դժուարացած էր, շատերը ուտելիքի ինչ ինչ տեսակներէ այնքան զրկուած էին որ անձկանօք կ'սպասէին պատերազմի վերջանալուն քիչ մը շաքարիզէն ուտելու կամ սա վեֆայի հոց ըսուած անտանելի ու անմարսելի բաղադրութեանէն ազատելու համար:

Ամէն օր միայն, պանիրը, ձէթը, օճառը և յն. մէկ խօսքով կեանքի բոլոր անհրաժեշտութիւնները, հետզհետէ կը բարձրանային, այնպիսի անտանելի համեմատութիւններ կ'անէին, որ կը մտածէինք թէ կամ անթի պիտի մնանք կամ չպիտի կարենանք ապրիլ: Սակայն պատերազմի բոլոր տևողութեան գրեթէ ամէն մարդ ապրեցաւ, և նոյնիսկ շատեր հարստացան և քառաւոր դրամներ պիղծեցին:

Սե հիմա պատերազմին վախճանին Կ. Պոլսոյ մէջ ալ պատահեցաւ ինչ որ բոլոր մեծ պատերազմներու մէջ գիտուած երևոյթ մը եղած է: Նրա թակաստեակէտով առևտրականներուն երեք մեծ գասակարգերէն, միջին գասակարգը ջնջուեցաւ:

Հիմա, հարուստներ, էնֆանտեր և ազգատներ չեն որ կը կազմեն մեր տնտեսական կեանքին հիմը այլ երկու գասակարգեր, ընչուէտներ և ընչազուրկներ:

Պատերազմները, սկսեալ հին Հուսի օրերէն, գլխաւոր առիթներ եղած են հարստութեանց կուտակմանց և անարդար շահերու: Բանակին հայթայթիչները, պատերազմին պատճառով ներածուած արգիլուած ապրանքի մթերքներ ունեցողները, կամ անգտանելի կարծուած ապրանքները չընարքով ներածել կրցողները, հարստացած են և կազմած են պատերազմէն օգտուողներու գասակարգը իսկ անոնք որ չեն կրցած այս բաները ընել կամ պատեհութիւնը շահագործել ուղղակի կամ անուղղակի էղանակով մը: Իրենց ունեցածն ալ կորսնցուցած են:

Բոլոր անոնք որոնք համեստ զբոսաբաններն էին, և զայն շահագործելով կ'ապրէին, երբ չկրցան բացառիկ շահ մը ապահովել, սպորուստի սղութեան զիտակալելու համար պարտաւորուեցան իրենց զբոսաբանները սպասել, քանի որ անոր շահովը ապրելու անկարող էին: Եւ ինչպէս զիտուած երևոյթ մըն է անոնք ալ դարձան ընչազուրկ և ազգատ և պարտաւորուած ապրիլ սկսան վաստակողներուն ծառայելով իր միջնորդ կամ պաշտօնեսայ:

Նոյնիսկ համեստ կալուածատէրներ, որոնք իրենց մէկ երկու կալուածներուն հասոյթովը կ'ապրէին, այսինքն համեստ զբոսաբաններ մը տոկոսով, երբեմն հարկադրուեցան անոթի չնստու համար այդ կալուածները ծախել և անով ապրիլ:

Սակայն որչափ ատեն որ պատե-

րազմը կը տևէր, կեանքի սղութիւնը հակառակ ճնշող հանգամանք մը ունենալուն, ամէն աշխատող մարդ իր ապրուստը կը հոնէր և նախապէս ազգատ եղողներու դասին միացող նոր ազգատներն ալ հուսադրուած կեանքի սղութեան կը զիտակալէին:

Այս երևոյթը երկու գլխաւոր պատճառ ունէր: Առաջին՝ զրամին արտաւճար առատութիւնը որ իր նշմանը չէ ունեցած երբէք, և երկրորդ՝ շահերու անհամեմատականութիւնը զբոսաբաններէ քանակին հետ թղթագրումը տեսակ մը ապրանք էր որ ունեցողը ձեռքէ հանելու կը ջանար, մինչ մէկ կողմէ անոր քանակութիւնը կը շատնար հրապարակին վրայ:

Գրամի առատութիւնը և ամէն մարդու զայն ձեռքէ հանելու ջանքը, ստեղծեց շրջաբերութիւն մը զրամագրութիւն: Եւ շահագրութիւնը՝ պատեհութեամբ անմիջական հետևանքներէն մէկը, երբեմն զբոսաբաններն մը միջանի պատիւը շահ արտադրեց: Ասկէ առաջ եկաւ հրապարակին վրայ առատութիւն մը թէ՛ զրամի և թէ՛ գործի որմէ օգտուեցան ոչ միայն հարուստները այլ նաև անոնք որ զբոսաբաններ չունէին սակայն այս շրջաբերութեան մէջ անոր արտադրած շահին միջանքներէն կրնային օգտուիլ:

Յետոյ պէտք չէ մտնայ թէ օրինաւոր շահուն յարակից գոյութիւն ունէր ապրին շահը, ուղղակի հետևանք պատերազմին: Վախճանի առևտուր, արտաձուլութեան և ներածութեան բացատրութիւններ, պատահաբար էին որոնք մէկ անգամէն կրնային մարդոց բողջը շինել, և բացառիկ հարստութեան մը տէր գործներ:

Ազգեցիկ պաշտպան մը, հովանաւորող բարեկամ մը, կրնային մէկ օրէն միւսը ընչազուրկ մը ընչաւէտ մը ընել: Այսպէս էր որ ստեղծուեցաւ նոր հարուստներու գասակարգ մը, որոնք իրենց շուրջը ապրեցուցին ուրիշներ: Շատերու զինուորութեան պատճառով բանակին մէջ գտնուելը, մարտու պակասը պատճառ մըն էր որ հրապարակի վրայ գտնուողները կարենային աւելի նպաստաւորիլ և աւելի օգտուիլ:

Յետոյ պատերազմը ապականեց բարձրը և կարգ մը բաներ որ պատերազմէն առաջ մարդիկ կը վարանէին ընել պատերազմի միջոցին անվարտն գործարարեցին, բաւ էր որ ատիկա շահ մը ապահովէր իրենց:

Բռնիչներ շատ մը համեստ առևտրու կ'էին կողմը եղան: Չկար տուէն մը որ ապրուստի զիտութեան համար, գէթ տան բնակիչներուն թիւը իսկականէ աւելի ցոյց տալու փորձ մը ըրած չըլար և տուով հոցի քանակը և պատահաբար բաժնւած պարէններու բաժինը քիչ մը աւելի տանելու ջանք ըրած չըլար: Կը թողուէ անոնք որ էյաշէի չըլարը կը քարտուէին, պայտածատները և վարձարները:

պարէններէն կ'օգտուէին և ինչ վերջապէս պատերազմին տևողութեանը անհանդուրժելի սղութեան այսպէս կամ այնպէս ամէն մարդ մէկ մէկ կերպով դարձան տարած էր և կ'ապրէր: Սակայն զինադադարէն յետոյ կացութիւնը փոխուեցաւ: Երևակայուած բարւոքութեամբ ապրուստի տեսակէտով բնականութեամբ: Սղութիւնը նոյնքան ստատուութեամբ կը շարունակէ և այսօր վեֆայի հոցը գոյութիւն չունի: Շահերն ալ սահմանափակուել ըսկսած են և հետզհետէ աւելի պիտի պրկուի հրապարակը երբ բնական վիճակ մը վերահաստատուի: Օրինաւոր 10-15% շահ պիտի դառնայ վերջնական օրուան ընթացիկ առևտուրին մէջ, երբ մասնաւոր գաղտնի բաղադրութեան և արկածախնայի կարողութեան կայան հանդիսացող հարուստներն օրնոյ և Ռուսներոյ հրապարակներու մէջ ալ պատերազմական կամ քաղաքական տաղանայի վիճակը վերջ գտնէ:

Առ այժմ այդ տեղերը տիրող խառնակ վիճակէն կ'օգտուին Կ. Պոլսոյ առևտրականներէն անոնք որոնք յանգրգնութիւնն ունին հազարաւոր ոսկիի ապրանք տանիլ Պաթմա, Օտէսա և Ն. վորոսիակ և ընել հոն մեծտոմեծ շահեր: Այնպէս որ հիմա Կ. Պոլսոյ գործած է Սե ծովու տաղանայի համար Բեռնիէ կայան մը: Հոս հասած ապրանքներէն մեծագոյն մասը կը տարուի Ռուսիա, յանդուրժան առևտրականներու կողմէ: Գանաղան օրինաւոր և ապրին միջոցներով, և այս կերպով է որ դեռ կան մարդիկ որ մեծաքանակ հարստութիւն կը զիջեն իսկ անոնք որ չունին այս յանգրգնութիւնը և միայն Կ. Պոլսոյ հրապարակին վրայ կը գործեն, լիայն 10-15 առ հարիւր շահով մը բաւականաւոր պարտաւորուած են, և նոյն իսկ այսօր կան համար ապահովութիւն չունին վասնզի խոշոր մրցակիցներ ունին իրենց դէմ:

Անգլիական մեծ տուներ գրեթէ գործ չեն թողուր տեղական զբոսագրութիւն որ անկարող է մրցելու այդ առանձնաշնորհեալ զբոսագրութեան հետ, որոնք կրնան եթէ ուզեն մեծապէս վտասել տեղական վաճառականութեան:

Երևակայեցէք որ Ռուսիոյ տուներ այսօր վերսկսած է իր գործառնութիւնները վերածուելով լիմիթրա ընկերութեան և քսան միլիոն անգլ. ոսկիի զբոսագրութիւնով, գրեթէ ամեն տեսակ ապրանքներ կը ներածէ Անգլիան:

Տեղացի վաճառականները, մասնաւոր փոքրիկ վաճառորդները, ստիպուած են հիմա միջնորդի դերին իջնալ և ուղղակի արտադրութեան վայրէն չեն կրնար ապրանք բերել Ռուսիոյ, անհզին միջերանցներու մէջ ամբարած է մեծ քանակութեամբ ապրանք, և կրնայ գինը իր ուզածին պէս բարձրացնել կամ իջեցնել:

Տեղական հրապարակին վրայ գործողներու շահերը, որեմն շատ սահմանափակ են և եթէ Ռուսիոյ մէջ ալ բնական կացութիւն մը հաստատուի, Կ. Պոլսոյ վաճառականները և բոլոր առևտրականները, պիտի պարտաւորեն նեղ շրջանակի մը մէջ շարժիլ: Եւ շահերը պիտի քիչնան և եթէ ծախքերը մնան արդի վիճակին մէջ հարուստ պիտի ըլլայ մահացու, զի դիւ-

վարժութիւններէն զիւրաւ հրաժարիլ: Արդէն այժմէն շատեր մասնաւոր են նեղութեան, Գրամագրութիւն չունեցողները, համեստ զբոսագրութիւն մը ունեցող սակայն արկածախնայի յանգրգնութիւն չունեցողները, բանակի մէջ ցարդ զինուորութիւն ընողներ — որոնք այսօր հոցի գրամի հետամուտ ըլլալ սկսած են, փոքր կալուածատէրները, պաշտօնեաները, հիմա յուսահատական զրուութեան մէջ կը գտնուին:

Այս անհրաժեշտ կացութիւնը բընական է որ յառաջ պիտի բերեր տեսակ մը պայքար: Եւ իրապէս դասակարգային շարժան պարտի օրինակներ սկսան երևան պալ, Գրաշար բանուորներու, հացագործներու, և պանքայի պաշտօնեաներու և այլն: Կազմակերպուելու և պահանջներ դնելու, ապացոյցներն են այն նեղ զրուութեան որ ստեղծուած է և չկրնար անհետանալ:

Աշխարհի ամեն հրու կամակատար և ամենէ կեղեքուած մարդիկը, հայ ուսուցիչներն իսկ գլուխ վերցուցին և կազմեցին ուսուցչական միութիւն մը, և հարկադրեցին մեր աղա թագապետները որ նուազագոյն 20 ոսկի ամսաթոշակի սակը ըլլուին:

Այս սրբազրուութիւններով հանգրծ բոլոր խաշտօնայ տարրը ընչազուրկ գասակարգ մը ըլլալէ չպիտի դադրի, զի բոլոր այս յաւելումներով իսկ հազիւ պիտի կարենայ ապրիլ:

Ասոնց քով կայ ուրիշ գասակարգ մըն ալ որ լու կը շահի, սակայն գործեալ չպիտի կարենայ ընչաւէտ և հարուստ դառնալ: Վասնզի այժմ է:

Այսպէս՝ բեռնակիրները, կառուպանները, նաւավարները և առհասարակ ծառայական արհեստներու մէջ գտնուողները, հիմա ունին բարւոք վիճակ մը նրա թակաստ: Աշխատասէր բեռնակիր մը կրնայ օրական 5-6 ոսկի հանել առանց շատ մեծ ճիգ ընելու և կառուպանի մը համար 10 ոսկի նուազագոյն շահ մըն է:

Սակայն այս գասակարգը առհասարակ գործի նախատեսութեան սովորաբար շուստութեան և ցոփութեան մէջ կ'սպասէ իր վաստակը, կարծելով թէ նոյն ձևով պիտի շարունակէ նաև ապագային ևս վասակիլ:

Հետևաբար երբէք անոնք ընչազուրկ գասակարգին պատկանելէ չպիտի գազրին և միայն հոն պիտի մնան: Այնպէս որ երկար ատեն երկու գասակարգ, ունեցողներ և չունեցողներ, հարուստներ և աղքատներ պիտի մնան դէմ դիմաց, մինչև որ ընկերային շերտաւորման մէջ անհրաժեշտ եղող երրորդ գասակարգը՝ միջին գասակարգը, ոմանց հարստութեան սահմանափակումով և այլոց խնայողութեամբ:

Մինչև այդ բնական վիճակին ստեղծումը, վտանգի ենթակայ և ամբողջ աշխարհ, շուրջէն զազափտութեան բոլոր քաղաքները կրնան հրդեհ մը բռնկեցնել, վասնզի պատերազմէն օգտուելով հարստացողներ դեմ ճիշտ այն պատճառով ազատացողներն ստեղծութիւնը ամենատեսակի է և պոսթկալու կ'սպասէ, ինչպէս նաև զինուորութեան պատճառով անաշխատ կ'ստանալու վարժուած և աշխատելու ուժուցած մարդկային զանգուածներու թիւը անհամարապէս կերպով աճած է:

ՀԱՅՅԵԼԵՐԻ ՄԵՑ

Բացի քանի մը բացառութիւններէ՝ ինչ օգուտ կրցաւ քաղել ազգը մինչև այսօր Պարսկաստան կտակով Աւրուստ զրկուած սանուհիներէն:

Չեմ ուզեր երկար պարտելով բացասական արդիւնքի մը յանգիլ: Այժմ որ մեծ մասամբ պատրաստած երիտասարդ մը կայ, որ եթէ պատերազմը վրայ չհասնէր վաղուց մեկնած պիտի ըլլար և որ արդէն իր օգտակարութիւնը ցոյց տուաւ, նախապէս ամենաչնչին ամսակաւով մը աշխատելով վարձարաններուն մէջ, երբ կ'ներկայանար իր իրաւունքը խնայելու, անոր առջև կ'ընեին անկէտ-սաքոնօն կրթութեան պահանջքը:

Արդէս թէ՛ այլևս անպէտ դարձած ըլլար Ֆրանսերէն լեզուն և վարկաբեկուած ֆրանսական գիտութիւնն ու գրականութիւնը:

Բարիք ապահանջութեան բոյն, իսկ Ձիգակօ, Ֆիլաուէլֆիլ և կարգ մը ուրիշ քաղաքներ սուրբերու ժամագրավայր, որպէս թէ՛ ապահանջու հակամէտ շէնքերով մը պարկեշտութեան և առաքնութեան տիպար մը պիտի հանդիսանար Ամերիկեան համայնականները յաճախելով, որպէս թէ՛ իզմիրի համար ֆրանսերէն լեզուն այլևս պիտի ծրարուէր դարակը գրուէր:

Այս բոլորը ձրի պատրուակներ են և ինչպէս կ'տեղականանք նոյն իսկ Ուսումն. խորհրդոյ անկեղծ անդամէ մը, ներկայացող թեկնածուին դէմ անձնական հակառակութեան արդիւնք:

Ուրեմն ազգին շահը դարձեալ ոտնակոխ կ'ըլլայ, որովհետև անձնական կիրքը կ'խառնուի անոր, սակայն Ուսումն. խորհրդոյ անդամը կ'մոռնայ թէ՛ Պարսկաստան գերդաստանին անդամներէն մին ձայն ունի այս խնդրոյն մէջ և օրուան առաջնորդը պատասխանատուութեան խոշոր բաժին մը:

Առջ. Տեղագրական Հայրը պէտք է իր հեղինակութիւնը զգալի ընէ, գոհացում ու լուծում տալով այս խնդրոյն, թողնելով անկէտ-սաքոնօն կրթութիւնը յառաջիկայ տարեշրջանին:

Թողունք իրաւունքն ու արդարութիւնը խղճի դէմ պիտի ըլլար կարծիք մասնակամիչոցի մը մէջ իր արդէն ունեցած մաքի պաշարը կատարելագործելով իզմիր գաղութաւոր և օգտակար հանդիսանալու պատրաստակամութիւն ունեցող երիտասարդ մը թողուլ և պատրանքներու ետեւէ իյնալ, ձգձգումի վնասակար քաղաքականութեան հետեւելով:

Կտակի մը արտագրութիւններն խղճի մտօք չկատարելու պարագան ևս պէտք է նկատի առնէ Առաջ. Տեղագրական Հայրն, որ քաջալերիչ հանգամանք մը չներկայացնէր, ապագայ կրտակարարներու համար...: ԵՍ

ՍԵՒ ԱՄՊԵՐ

ՀԱՅՎԱԿԱՆ ՀՈՐԻՋՈՆԻՆ ՎԱՐՑ

Բ.

Արքան ալ Գաշնակցական պատուիրակներուն առաջարկը մերժուեցաւ Բարիքի Ազգ. Համագործակցութեան մէջ, այսուամենայնիւ այս հարցին յաջորդող որոշումները համերաշխութեամբ և կրնանք ըսել թէ միասնանշտութեամբ արուեցան:

Այսպէս, երկու անշատ պատուիրակներուն ունենալու որոշումը համայնութեամբ արուեցաւ և թրքահայ Ազգային պատուիրակութեան անդամներուն ընտրութիւնը միասնանշտութեամբ կատարուեցաւ:

Գարձաւ, համերաշխութեամբ որոշուեցաւ Յանձնագործակցութեան մը միջոցաւ ուսումնասիրել ամբողջական Հայաստանի Առժամեայ Կառավարութիւն մը հաստատուելու ծրագիրը:

գաղութները սակ իւրերէն-իւրեր (par voix consultative) մասնակցեցան ժողովոյ աշխատութեանց և Համագործակցութեան ռեժիմը՝ բայց անոնք համերաշխութեամբ արուած բոլոր որոշումներուն համար միտ և համակարծիք գտնուեցան և թէ՛ փակ (de facto) և թէ՛ իրաւունք (de jure) Ազգ. Պատուիրակութիւնը ընդունած եղանակով օրէն երբ Պ. Ա. հարունեան Պողոս Փաշա Նուպարի հետ միասին պաշտպանաց Հայկական Դատը խորագրով ձեռնարկուեցաւ, մին իրրեւ Արարատեան Հանրապետութեան ներկայացուցիչ և միւսը՝ իրրեւ Թրքահայոց ներկայացուցիչ:

Ինչ իր այս հանգամանքով Պ. Ա. հարունեան, միասին ստորագրեց նաև Համագործակցութեան ներկայացուած յիշատակագիրը:

Այս կերպով, Արարատեան Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահը իր Կառավարութեան բարոյագէտ կապած (engager) եղաւ Բարիքի Ազգ. Համագործակցութեան շահներուն:

Արդ, Արարատեան Հանրապետութիւնը ինքզինքը ամբողջական Հայաստանի Կառավարութիւն հռչակելով՝ բոլորովին անխնայ չ'ըլլաւ քաղաքական և արհեստագործական իր շահերէն և արհեստագործական իր շահերէն և արհեստագործական իր շահերէն:

Ասիկա արարք մըն է զոր անշուշտ կարելի է « յանձնարարելի » նկատել:

Եւ իր այս որոշումով՝ Արարատեան Հանրապետութիւնը այլևս հանգստեան կը կոչէ Հայ Ազգ. Պատուիրակութիւնը և անոր նախագահը վստահ. Պողոս Նուպար փաշա. զի արդարև, քանի որ Արարատեան Հանրապետութիւնը ինքզինքը միացեալ Հայաստանի Կառավարութիւն կը հռչակէ և քանի որ անիկա ունի ազգին իր ուրոյն Պատուիրակութիւնը Բարիքի մէջ՝ այս վերջինը կը գտնուի կր ինի Պատուիրակութիւնը ամբողջական Հայաստանի, և Պողոս Նուպար Փաշայի նախագահած Պատուիրակութեան ուրիշ բան չի մնար ընել ինչ որ փաստուածները ժողովը և մեկնելու...:

Եւ ասիկա կը պատահի հայկական հարցին վերջնական կարգադրութեան նախորդակին...:

Հայ մը, որ իր գերդաստանին անպակի բեռնակրէն, որ իր անձնատիր հայրենասիրութեամբ և անձնուիրութեամբ, որ իր հիւղեցիկ կենսունակութեամբ ու գործունէութեամբ 1913էն ի վեր, վեց երկար տարիներ ինքզինքը ամբողջովին Ողբի ազատագրութեան նորից մէջ, Հայ մը որուն անունը այլևս Հայկական ազատագրութեան հետ համահիշ դարձած է բոլոր եւրոպական գահիճներուն մէջ և որ եւրոպական ու Ամերիկեան հասարակութեանց մէջ ժողովրդականութիւն կը վայելէ իրրեւ անխոյնանը Հայկական ազատութեան այս հայր վերջին պահուն դուրս նետել կ'ուզուի ազտու թէ՛ ինչ-իչ մը պէտք...:

Այս բանը անշուշտ մեր ազգային սովորութեանց շարքէն է զի մենք սակաւին բաւականաչափ քաղաքակրթութեամբ չենք մեր գործիչները ըստ արժանւոյն յարգելու համար, բայց պէտք է՞ որ գոնէ որ, ազգային կենսական շահերու տեսակէտով, այս զայնթակողութիւնը զգուշանայինք պարզելէ եւրոպայի առջև որ մեր սրժանուոր գործիչները մեզէ շատ քիչ քիչ քիչ և որուն վրայ անշուշտ ամենատխուր տպագրութիւն պիտի գործէ Արարատեան Հանրապետութեան այս ցաւալի որոշումը:

Լիւիոն ՄԿՐՏՆՁԻԱՆ

ԳԵՆԸ ԱՃՎԱԿԱՆՑԻՔ

ՄՕՐԿԵՆՔԱՈՒ

ԵՒ

ԿՐՕՆԻ ԷՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԿՐՕՆԻ ԴԱՍԸ

(Շար. Նախորդ թիւէն)

Յիսուս միաժամանակ կ'աղաչուէր իր ժողովուրդին, ստուգուէր իր խոսքը, սպասուէր իր խոսքին, անանկներու, հաւանքներու, լքուածներու, հոգիով ազդուներու (ազդուներու) միջոցով իր սիրտը իր ժողովուրդին և որովհետև Հէր կրնար անոնց ետևել ինչ-նիւթական սիրտով իր տակ, Յիսուս կը նկատէր անոնց ազգին երկնային արքայութեան և երանութեան հետապետները մը, որ շատ ալ չօգտուէր իր և հասկնալի չէր նիւթապաշտ և ազգա ժողովուրդին Այսօր իսկ քրիստոնեայ աշխարհը սակաւին ըմբռնած է այդ վարդապետութեան վեհութիւնը, քանի որ կեանքի մէջ կործանուած է զայն: Քրիստոսի վարդապետութեան այս իտէալ մասը՝ նոր ժամանակները ընկերվարական գաղափարներու հետ հաշտեցնելով միայն կուրելի պիտի ըլլայ իրականացնել զայն երկրի վրայ, մտա Կառգոն ցոյց պիտի տայ այս խնդրին կարելիութիւնը:

Ինչպէս ամեն գաղափար ու իտէալ՝ Քրիստոնէական կրօնն ալ իր սկզբնական նախնական վիճակի մէջ պարզ ու հասկնալի էր, սակայն ան ևս, ինչպէս ուրիշ կրօններ ու վարդապետութիւններ մուտք գտնելով զանազան ժողովուրդներու զանազան խաւերու մէջ, իր պարզութիւնն ու յստակութիւնը կորսնցուց, այլասերեցաւ, պղծատրեցաւ, ազտուեցաւ և անձանաչիլի դարձաւ իր իսկ վարդապետին իր աշակերտներն ու առաքելները իրմէ շատ ետքը գրեւով իր կեանքն ու գործունէութիւնը, աւելի աւանդութիւններու վրայ հիմնած են իրենց գրուածքները, քան իրենց եղելութեանց: Յետագային՝ եկեղեցւոյ հայրերը և մտնաւանդ պապերը իրենց աստուածպետական կարգը ամրապնդելու համար նորանոր փոփոխութիւններ մտցուցին Ս. գրքի զանազան հատուածներու մէջ, յարմարեցնելով զայն իրենց տեսակէտներուն և շահերուն: Քրիստոնէութիւնը՝ այլևս Պողոսի քարոզած անշա հայնդիք և աննիւթ կրօնը չէր, այլ շարաշահու միջոց մը՝ միամիտներու հոգիներուն վրայ ազդող առապելներով ի, աստուածպետութեան ձեռքը գործիք մը ժողովուրդները կողպտելու և զանոնք անհոն տղիտութեան մէջ պահելով՝ իրենց տպրուտի և սնափառութեան մշտական ազդերը մը ստեղծելու համար:

Մտքերու այս համալիրահային խաւարը պահիկ մը լուսաւորուեցաւ մահմետական Արաբներու շնորհիւ, որոնք բնականապէս և Պարսկական քաղաքակրթութեան վրայ ինքնուրոյն նոր քաղաքակրթութիւն մը ստեղծեցին, պահպանելով հին զասականութեան մնացորդները մոլեռանդ քրիստոնէութեան հարածանքներէն: Եւ մինչդեռ ամբողջ եւրոպան միջնադարուն՝ գիտութեան դէմ թափուած մոլեռանդ հալածանքներու յատկապէս կը ներկայացնէր, իր քիչին տակը՝ Սպանիոյ հարաւային կողմերը արաբական, ճշմարիտ գիտական դպրոցները կը ծաղկէին:

Այս վիճակի մէջ էին գործերը, երբ նոր դարը վերածնութեան լոյսերով բոցավառ՝ յեղաշրջեց տիրող կարգերը՝ կրօնի, հաւատքի, դաստնութեան, եկեղեցիի և նոյն իսկ աստուածութեան գաղափարներու մէջ մեծ յեղաշրջում մը յառաջ եկաւ: Մարդկային միտքը անկաշիւնդ՝ սխառ փնտռելու ճշմարտութիւնը, կոպերիլի, Քոլոմպոս, կալիլէյ, Տարվին, Լամարք, Լայպլ, Հէքէլ, Հէրշել, Քառի, Լաբլան և գիտական-նեոնային հասարակ համաստեղութիւնը, որոնց իւրաքանչիւրը արդէն մէջ-մէջ աստուածամարդ կը ներկայանայ մեզի իրենց իմացական բարձր կարողութեամբն ու մէյմէկ մարգարէ և առաքել իրենց գիտելովն ու գուշա-

սէսի, Յիսուսի կամ Մուհամէտի աստուածը չէ որ ստեղծած են տիեզերքը, որովհետև ան՝ տիեզերքը՝ անակիրք է ու անվստահան թէ, տիեզերական նիւթի յաւիտական շարժումով կը շինուի ու կը քանդուի, կը քանդուի ու շինուի անսահման ու անվերջ կերպով, թէ՛ պարզ ազգով կամ զօրեղ հեռադիտակով տեսնուած աստղերն ու մոլորակները ամենաչնչին մասնիկը միայն կը կազմեն տիեզերական անսահմանութեան, թէ՛ մեր երկիրը չէ տիեզերքի կեդրոնը, այլ անոր վէկ չնչին հիւլէն, որ իրմէ շատ աւելի հակայ մոլորակներուն և անոնց արբանեակներուն հետ միասին կը զատնայ մեծ զանգուածի մը՝ արեգակի շուրջը, որ իր կողմէ՛ իր համաստեղութեան հետ միասին ուրիշ արեւներու և աստղերու շուրջը կը դառնայ և որոնք իրենց կարգին՝ ամենազօրեղ հեռադիտակներով միայն նշմարելի միգամածներու շուրջը մարդկային մտքին համար անհասանելի ու անըմբռնելի տարածութիւններ ընդգծող շրջաններ կ'ընեն... ու այսպէս անվերջ:

(Շար.) ԼԵՕ

ՔԱՆԱԲԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԻՐՄԱՆԱԿԱՆ ՆՈՐԱԿԱԿՈՒ Սահմանադրութեան մէջ, Վայմարի Ազգային ժողովը աւելցուցած է վերջին յօդուած մը, Համաձայնութեան կողմէ պարտադրուելիք արտաքստուանութեան մասին: Այդ յօդուած հետեւեալ կերպով խմբագրած է « ոչ մէկ Գերմանացի չպիտի յանձնուի օտար կառավարութեան մը դատաւարութեան համար », նոր սահմանադրութեան այս արտագրութեանը հիմնովին հակառակ է դաշնագրին՝ անհասանելու ոճիրներն պատժելու վերաբերեալ պայմաններուն:

Նիւ-ԵՐՔԵ կը հեռագրեն թէ Ատտիլէզը Քրէստի ծանուցածին համաձայն, Մեքսիկայի կառավարութեան նախագահը Պ. Քարոնցա հրամայած է Անգլիոյ գիւնապետական գործակատար Մր. Քամինցի մեկնել Մեքսիքոն:

ԼԱՆԵՅԵ կը տեղեկացնեն թէ նախորդ քայլերը, Ամերիկեան բնակիչներուն կը բաժնէ փայտի կտորներ իր կողմէ կարուած և իր աստղադրութեամբ փորագրուած, իսկ բնակիչները զանոնք բարձր կերպով կը ծախեն շրջիկներու:

ԳԻՐՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱԿ Ազգ. ժողովը, « Բայեստակ » անունը չի պիտի առնէ, ինչ որ, էպիթ նախագահը, որոշած էր անուանել զայն:

ՄՈՍԿՈՒԱԿ կը հեռագրեն թէ պօլշէվիկներու Սովիէթի անդամները այժմ իրարու դանակ կը քաշեն ժողովներու մէջ, և անոնցմէ ոմանք ընկերվարականներու հետ բանակցած ըլլալուն հետևանքով ծուռ աչքով կը դիտուեն Քասին մը սղոյնքի պօլշէվիկները ներքին հարցերու մասին գիշտութիւններ ընելու անհրաժեշտութիւնը կը տեսնեն միևնոյն ժամանակ արտաքին թշնամիներու գիւնագրելով Լէնին, ներկայիս նուիրուած է արտաքին գործերու:

ԱԻՍՏՐԱՆՆԱԿ նախորդ կայսր Շարլ Արշիւրը ժողովին նամակով մը կ'ի-

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4. Պոլիս 3 Սեպտեմբեր 1919

ՖՐԱՆՍՍԱՄՈՒԼՐ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ

«Փան» կը գրէ թէ, նմերիկա թուրքիոյ վերաբերեալ իր տեսակէտը տալու համար չէ պարզած: Ուրիշ թերթերը կը ծանուցանեն թէ վերջերս Ամերիկայի կողմէ թուրք կառավարութեան տրուած վերջնագիրը սպառնոյց մըն է որ, Մ. Նահանգները ընդունած են Հայաստանի հոգատարութիւնը:

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Բարիգիտն թերթերը, Վաշինկթընէն հասած լուրերու վրայ յիշելով, կը գրեն թէ, Ամերիկա թուրքիոյ ներքին անդորրութիւնը տեղական ուժերով ապահովելու համար, հոն յանձնառութիւն մը պիտի ստանձնէ:

ԱՄԵՐԻԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

Փոքր - Ասիոյ Ամերիկեան քննիչ յանձնախումբը հազիւ դեռ առջի օր հասած է Բարիզ: Իր տեղեկագիրները Համաձայնողին նոր տուած է:

ԶՕՐ. ԲԵՐՇԵՆԿԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Ֆրանսայի մէջ Սմելիկեան ոյժերուն վերին հրամանատար, Զօր. Բերշենկ Բարիզէն Նի - Եօրք մեկնած է, Ամերիկեան զբաւակարարով:

10,000 ՈՍԿԻԻ ԳՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Պոլսոյ Երկրագործական գրամատան մէջ 10,000 օսկիի գողութիւն մը ելած է: Քանի մը ձերբակալութիւններ կատարուած են:

ԱՄԵՐԻԿԱՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

Վաշինկթընէն կը գրեն թէ՛ Պատերազմ. Նախարարը ծանուցած է թէ՛ ներկայիս Սերպիոյ մէջ գտնուող Ամերիկեան զինուորները պիտի կանչուին և հաւանական է որ անոնց տեղը բռնեն կամաւորները:

Պ. ՔԼԵՄԱՆՍՕԻ ՆԱՄԱԿԸ

Վերսալէ կը հեռագրեն. — Պ. Քլեմանսօ, Աւստրիական պատուիրակութեան պետ Պ. Բէնէտի պիտի յանձնէ նամակ մը, Աւստրիոյ զաշնագրին հետ Այդ նամակը կը հաստատէ Աւստրիոյ անեցած պատասխանատու զիբքը համալսարանային պատերազմին մէջ: Հոն ակնարկութիւն մը կայ կուրի սկզբնաւորութեան պահուն Հայաստանի ներքին իրաւունքները ինչպէս նաև այն մեծ պատասխանատուութեան մասին որ կ'իջայ Աւստր. և Հունգարիոյ վրայ: Այս շարժումները բերումով, Համաձայն կոմիտեան շին շնորհած Աւստրիոյ ևս այն պայմանները, զորս շնորհեցին իրաւ, բխած միւս ազգերուն, ինչպէս Զէքօ - Սլովաքիոյ ևն.: Այդ նամակին մէջ կը խօսուի նաև այն պայմաններուն մասին որոնք նպատակ ունին ջնջել Աւստրիան Գերմանիոյ միացնելու ի նըպատ եղած ամէն բարոյական:

Վերջին պահուն հասած հեռագրի յանձնարար տեղի պիտի ունենայ յառաջիկայ օրերէս, Թրիանոնի պայտարին մէջ, Ներկայ պիտի գտնուին Աւստրիոյ հետ պատերազմի մտած բոլոր տէրութեանց ներկայացուցիչները:

ԹՐԱԿԻՈՅ ՏՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆԵՐԸ

Բարիզի Ամերիկեան պատուիրակութեան պետ Մր. Բօլք, Պ. Քլեմանսօի ծանուցած է թէ թուրքիոյ տրուած սպանական վերջնագիրը միմիայն Մ. Նահանգներու կառավարութեան կողմէ կրնայ ընդունուի:

ԹՐԱԿԻՈՅ ՀԱՐՑԸ

Ամերիկեան քննիչ յանձնախումբը համաձայնողին ծանուցած է թէ թրակիան Պոլսոյ հետ կը կազմէ անբաժան մաս մը:

100 ՄԻԼԻՈՆ ՓՅԻՆՈՒՈՒԹԻՒՆ

Յուճատանի ազգային գրամատան անօրէն Բարիզէն Աթէնք գալով Պ. Բէրշենկի բացատրութիւններ տուած է Ամերիկայէ ըլլալիք 100 միլիոն տոլարի փոխառութեան մասին:

ԳԵՐՄԱՆ ԾԱՆՈՒՅՆԳԻՐԵՐ

Վէրսալի Գերման պատուիրակներու կողմէ 3 ծանուցանողներ տրուած են Առաջինին մէջ կը խնդրուի իրենց խնդրելով թէ Տանցիկ երբ ազատ քաղաք պիտի ըլլայ և անոր ընկերները թոյլ հարստութիւն պիտի ունենան ևն.: Երկրորդը կը բողոքէ վերանորոգման յանձնարարութիւնները կը խնդրեն որ միմիայն հաշուուի ուղղակի գնահատական գործողութիւններէն յետոյ եկած վնասները և ուրիշ միջոցներու արգիւնք եղող վնասներու հատուցում չի պահանջուի — Երրորդը խնդրուի մըն է, Գերմանիոյ անտեսական և սակար. զիբքութիւնը ընծակելու համար:

ՆՈՐ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ

Անգլիոյ, Ֆրանսայի, Պելճիքայի միջև Բալթիկ մէջ խորհրդակցութիւններ կը կատարուին Արևելեան հին ու նոր քաղաքներու մէջ երկաթուղային գիծերու հաստատութեան համար:

ՌՈՒՍ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏՆԵՐԸ

Օտեսայ, Բիել, Ռէրսոն Պոլշիկներէ մաքրուած ըլլալով հայրազանցութիւնները վերսկսած են: Այս երեք նախաձեռնողներուն հետ:

Տեղական Լուրեր

ՆԱԽԱՀԱՆԳՍԻ վարչութիւնը կը ծանուցանէ նախաձեռնողներուն թէ՛ Մարմարաի և Թէրեզուսի միջև նշմարուած է ծփուն սկան մը:

ՀԵՆՐԻՍԻՆ առողջապահութեան տնօրէնութիւնը հետևեալ կը ծանուցանէ. — Վերջին 24 ժամուան ընթացքին իզմիրի մէջ պոստանոս են թիւֆօի 3, որոնցմէ երկուքը մահացու, ծաղիկի 3, սպաննական կրիբի 2 մահացու դէպք: Զայի և Տէտէթօյ մէջ պատահած է սպաննական կրիբի 3 դէպք:

ԿԻ ՏԵՂԵԿԱՆԻՍԻՍԻ Թէ վերջին դէպքերու պատճառաւ իզմիրի և Սէօքէի միջև ընդհատուած երկաթուղային երթևեկութիւնը պիտի վերսկսի յառաջիկայ շաբաթէ:

ՀԱՅԱԳՈՐԾ Բեթրօ Բէթրիտէս, առջի իրեկուն ձերբակալուած է իր կնոջ թունաւորման պատճառը զարձած ըլլալուն համար:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ նախորդ նախարարը իսմայիլ Սիւրքի պէյ, առջի օր, առաւօտուն քաղաքս ժամանած է:

ՔԱՂԱՔԱՍ յոյն սրճարանները և դարձեալ տունները Սէնտիքա մը կազմած են, որուն առաջին նիստը տեղի ունեցած է վերջին ուրբաթ օր: Այս Սէնտիքան արդէն գոյութիւն ունէր: Սէնտիքան նախագան ընտրուած է Պ. Սթէֆանօրուս:

ՎՈՒՐԼԱ է առջի օր իզմիրի բանտ փոխադրած են 9 իսլամ աւազակներ: Անոնք Վուրլաի մէջ ժամանակէ մը ի վեր սպանութիւններ և գողութիւններ կը գործէին:

ՎՈՒՐԼԱԻ մէջ ոճիրները յաճախազէպ գտնուել սկսած են: Օգոստոս 30ին, Բանտօթի անուն երիտասարդ մը ծանրապէս վիրաւորուած է գտնակով մը, իր քոյրը և անոր զուտը հազիւ չորս ամսու:

ՔՈՅԱՔԻՍ անուն յոյն մը իրիկուն մը, կը յարձակի Բացարու անուն յոյնի մը վրայ և սպաննելու մտք երեք հարուած կը պարպէ, որոնք ծանր արդիւնք մը չեն տար: Յարձակումի պատճառը հին վրէժ մը ըլլալ կը թուի: Յանցաւորը ձերբակալուած է:

ԻԶՄԻՐԻ հրապարակ այս շաբաթ ընդունած է 500 թօս շաբաթ և ստատ, և Պոլսէն՝ 1000 պարկ բրինձ ցորեն:

ՆՈՐ ԴՊՐՈՑ

ԳԻՇԵՐՈՒԿ ԵՒ ՑԵՐԵԿԵՍՅ

ՊԱՉՅԱՆՅՑ ԱՄԲԱՐԱՆ

Է ԵՐՁԱՆ

Մեղիս Փողոց 69.

Հնդուներութեան արձանագրութիւնները կը սկսին Զորքաթի 3 Սեպտեմբեր:

Դատաստութիւնները կը սկսին երկուշաբթի. 8 Սեպտեմբեր:

Արձանագրութեան համար գիւմի տեսչութեան առտուան ժամը 10-12:

Հիշատէք Տնօրէն

ԳԷՈՐԳ ՏԵՐ ԲԱՐԹՈՂ

ՊՈՅԱՃԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՒ ՑԵՐԵԿԵՍՅ

ԵՐՁԱՆ Ժ.

Ազգային հիմնական դաստիարակչական, շնորհապատկան և առեւտրական ինստիտուտի պատրաստութիւն (մասնաւոր հոգաւորութեամբ կ'ուսուցանուի ձերբակալները, Անգլիերէն և Յունարէն շնորհներ):

ՎԵՐԱԲՅՈՒՄ ՅԱՆԱԶԻԿԱՅ ԴԵ (3 ՍԵՊ.)

Դասերը կ'սկսին նոյն օրը իսկ:

Ծրագրի և ընդունելութեան պայմանագրեր համար գիմի տնօրէնութեան, Ֆուտսի (Ապրիլ-համ) փողոց, 21: 16:

Առաւօտները ժամը 9-12

— Ստացանք Ջահիլի գրական հաւաքածոյ, թիւ Բ. Վարդան Գէորգեանի, Գահիրէ սպառք. Գրիգոր ձի-հանեան Գին՝ 15 զրէ:

Հունգարիոյ թագաւոր է, և թէ մինչև իր գալուստը, զինքը յաջորդ կը կարգէ: Հայաստանի տան իբր պետ, շնորհակալութիւն կը յայտնէ արշի-գուքս ժողովին, իր ծառայութեանը համար:

ԶՕՐ. ՄԱՐՇ Ռուսիոյ մէջ անգլիկան առաքելութեան կողմէ, Օգոստոսի մէջտեղ, զօրավար Երևանի մօտ երթալով անոր ծանուցած է թէ, եթէ նախարարական խորհուրդ մը չկազմուի հիւսիս-արևմտեան (Բէլալ) Ռուսիոյ համար, էսթօնական գունդերը պիտի դադրին կուռելէ և թէ անգլիկան առաքելութիւնը ոչ մէկ օժանդակութիւն պիտի ընծի: Առաջ գունդերուն, և անոր կուտար 45 վայրկեան պատասխանելու: Զօր. Սիւտէնիչ Քոլչաքի անունով ընդունեց և նախարարութիւն կազմուեցաւ հետեւեալ կերպով, Զօր. Սիւտէնիչ կ'ըստանձնէ պատերազմ. նախարարութիւնը և ընդհ. հրամանատարութիւնը Պ. Լիանզօֆ ելեմտական նախարարութիւնը: Բէլալի կառավարութեան առաջին գործը եղաւ էսթօնի հետ համաձայնութիւն մը կնքել: Այս համաձայնութեամբ, էսթօնիա կ'ըստանայ անկախ և Ռուսիոյ կուտայ 60 հազար զինուոր:

ԹՕՔԻՍԷ կը հեռագրեն թէ, ծառանական դահլիճը երկար խորհրդակցութիւններէ վերջ որոշած է իմացնել Քոլչաքի թէ չկրնար անոր խնդրանքներուն պատասխանել, զրկելով բազմաթիւ զօրաբաժիններ պոլշիկներէ: Բնութիւնը կը հեռագրեն թէ, էսթօնի Գէյլալ պատրաստութիւն կ'տեսնէ Ֆրանսա մեկնելու և Համաժողովին մէջ իր տեղը գրաւելու:

Ազգային Անցուցարմ

Այսօր երեկոյ Գաւառ. Ժողովը նիստի հրաւիրուած է լուծելու համար իր օրակարգին վրայ գտնուած կարգ մը խնդիրները: Քաղ. Ժողովը պատրաստած է 1919-1920 շրջանի պիւտձէն և անոր տպեալ օրինակներն զրկած երեսփոխաններու ուսումնասիրուելու համար: Անտարակոյս երեսփոխանները պիտի կատարեն իրենց պարտականութիւնը և կրկին չպիտի վրիճեն Գաւառ. Ժողովոյ նիստը:

— Ասկէ առաջ, Առաջնորդարանի կողմէ, Եգիպտոսի Անգլ. զինուորական իշխանութեան մօտ գիմու կատարուած էր իզմիրցի 15 Հայ գերիներու ազատման համար: Եգիպտոսէ Առաջնորդարան հասած պաշտօնական գիր մը կը ծանուցանէ անոնցմէ 2 ին ազատ արձակումը, որոնք են՝ կարապետ Պէյրուեան և Արմենակ Շանոյեան:

— Առջի օր, Տեղապահ Հայրը կուսակալին այցելած է և խնդրած է որ որբանոցներու համար շէնքեր հայթայթուին: Կուսակալը խօսք տուած է աշխատիլ քանի մը օրէն գտնելու որբանոցներու յարմար շէնքեր:

— Ա. Կ. Որբանոցի կ'նուիրէ Պ. Օննիկ Փէշտիմալեան 20 օսկի, իր մօր՝ Տ. Իսկուհի Փէշտիմալեանի մահուն առթիւ ի Տէրիզլի (Գ. Ս.):

ՅՈՒՇԱՏԵՏՐ

«ԱՐԹՕՆԻՔ» ԼՍՐԿՆ. ՄԻՈՒԹԵԱՆ

Մէլ Լոնտոնի քաղաքի մէջ

Ժամը 8ին (4. 6)

Դ. (Սեպտ 3) Ա. դաս էրասմակուսութեան Պ. Կ. Բարազամեանի կողմէն:

Ե. (Սեպտ 4) Գրական գեղարուեստական հաւաքոյթ՝ Պիտի թանախօսէ

ՏԻՍՐ ՆԱԶԱՐԷԹ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Նիւթ ունենալով՝ կրնա և ազգային Մուտքը ազատէ, կը յանձնարարուի ձշտապահ ըլլալ:

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԻՔ
ՍՏԵՓԱՆ ԻՓԼԻՔՅԵԱՆ

Ա. Ե. Մ. Օ. Կ. Բ. Փ. Ո. Ղ. Ո. Յ.

ԱՆՆԱԿՆԵ ԵՒ ԳԱՂՈՒԿԱՆ ԱՌՁԱՆԿԱՐԳ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ
ՅԵՐԳՈՒՍՆԵՐՈՒ ԵՒ ԹԵՄԱՆՈՒՄ

- Մեծ-հեղինակ. — Գրէր տը Շին. — Շարմէօղ. — Կրքնատիէ. — Թափթալ. — Գէնկալին. — Ձայ. — Էօլիէն. — Գրէր ժօրժէթ. — Վրոու տիւ Նօս Եւն.
- Բըշէրէ. — Կապարտին. — Գօթինկ. — Ուէրժ. — Տիակօնալ. — Շէվիթ. — Բաշմիր. — Մուսլին. — Էթամին. — Վիլլէլլա Եւն.
- Ձանդան. — Թիւլ Մուսթիքէն. — Տանթէլ Վարանթէն. — Բուրգէ և բամպակէ գուլպաներու ճօր մթերք.
- Ճերմիւրէն. — Մուտարուամ, Տրա տը լի և Գրուաղէ Horrokes' տառջնա-կարգ գործատան.
- Ան-շահ-հեղինակ. — Ակուայի բաթ և ջուր. — Kalynos և Cherry Blossom բուստաներ, Pears և Velvet օճառներ.

ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՏԵՐԵՆՈՒԹԻՒՆ

ՏՊԱՐԱՆ ԱՐԱՄԻՔԻԱՆ

ԷՐՄՆՈՒՄ 1883ԾՆ

- ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպագրուին գրքեր, գրքոյկներ, տետրակներ, յայտարարու-թիւններ, հարսանեկան հրատարակումներ, զեկուցատուներ ու յանձնարարներ ևն.
- ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակ-ներ, ընկալագրեր, վերջապէս վաճառատուն մը վերաբերեալ ամեն տեսակ տպագրական գործեր.
- ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին տեղեկագրութիւններ, երկրորդնորու նամակ-հրատար-գրեր տոմսակներ և վերջապէս տպագրական արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր.

Ամեն լեզուէ՝ շԱՅԵՐԵՆ, ՅՐԱՆՍԵՐԵՆ, ԱՆԳԼԻԵՐԵՆ, ՅՈՒՆԱՐԵՆ, ՅՈՒՐԲԵՐԵՆ

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՊԵՏՊԻՍՈՒԹԻՒՆ

ԱՄՐՆ ՏԵՍԱԿ ԳՈՐԾԱՐԱՆՈՎ

Մտնոր եւ խնամեալ գործ օրուան զինքու վրայ

Տպարանս բաց է առաօտէ մինչև կես գիշեր
խնդրանկներու համար

ՎՃԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԽԻԿ

ROYAL EXCHANGE ASSURANCE

ՀՐԴԵՅԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդհ. գործակալ
C. WHITTALL et Co.
Շ. ՈՒԹՅՈՂ և ԸՆԿ.

ԼՈՒԻ ՊԱՐԹՈՒԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԳԵՐԹԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԳԱՇՆՎԳՐԻՆ

Դաշնագրին 227 և 231 թղ. յօդ-ուածները գործադրութեան գրին Մեծն Բրիտանիոյ յայտարարութիւնն էր: 227 թղ. յօդուածը, Ամերիկայի Միաց. Նա-հանգաց, Մեծն Բրիտանիոյ, Ֆրան-սայի, Իտալիոյ և Ճաբոնի կողմէ կարգուած հինգ դատարաններու ատ-եանին ստիճէ՝ հանրային՝ ամբաստա-նութեան տակ կ'առնէ Հօկէնձօլիւն եան կիլեօմ Բ. ընտարարած ըլլալուն համար միջազգային բարոյականը և դաշնագրներու նուիրական հեղինա-կութիւնը: Այս հետապնդումը, որու մէջ ամբաստանեալը պիտի կրնայ գտնել իր ունեցած պաշտպանողական երաշխաւորութիւնները, պատերազմի ատեն մերժուած ըլլալով հազարաւոր զոհերու, այժմ միջազգային բարոյա-կանին առջև կը բանայ նոր ուղի մը: Ինչ բողոքներ ալ որ յարուցանէ Գեր մանիոյ մէջ, և հակառակ իր ներկա-յացուցած դժուարութիւններուն պէտք է որ տեղի ունենայ այդ հետապնդու-մը: Անիկայ ոչ թէ վրէժխնդրական զգացումէ մը, այլ՝ իրաւապահանջ արդարութեան կը բղխի Բարոյակա-

նին հեղինակութիւնը և դաշնագրին ամրակուած ուժերը պիտի խախտէին, եթէ դաշնակից ու զինակից պետու-թիւնները ամէն ճիգ չթափէին՝ սոյն արամադրութեան գործադրութիւնը ա-պահովելու համար: Անոնք չափած են ատոր ծանրու-թիւնը և կշարժ հետեանքները: Յա-նուն Արգարութեան, և վհատեցնելու համար ամէն անոնք, որոնք կրնային ռճրական օրինակի մը հետեւելու փոր-ձութիւնը ունենալ, անոնք «անհրա-ժեշտ համարեցին պատժուիլ ա՛յն անձերուն, որոնք պատասխանատու են մարդկային ազգի կրած չարիքնե-րուն»:

Հաւագոյն պիտի ըլլայ բնաւ բան մը չըսել, եթէ հարկ ըլլար օրին մէկը ատոր համակերպիլ Հատարակոց խիզ-ճը չէ՛ մոռցած գաշակիցներուն տը-ւած հանդիսաւոր խառնուր: Անոնք խոստացան դատարանի տալ իրեն, Պէտք է որ յանցաւորները պատժուին: Ենթարկուած պատասխանատու-թիւններուն մէջ չկայ աւելի ծանր, չկայ աւելի բարձր՝ քան Գերմանիոյ կայսեր պատասխանատուութիւնը: Ա-նիկա իրաւապետօրէն պիտի կրնար հետապնդուիլ՝ պատերազմի օրէնք-ներուն և սովորութեանց զէմ գործած ըլլալուն համար: Պատերազմի այդ իշ-խանը, գերագոյն պետն ըլլալով ցա-

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դեմ. — NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON
CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON

Ծովային. — PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL

Դիակը մանրամասնութեանց համար.

ԸՆԳՆԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ
Լ.ԵՒ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

COMERCIAL UNION ASSURANCE LTD.
FIRE & LIFE

ՄԵԾ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ՍՏՈՐԱԳՐՈՒԱԾ ԴՐԱՍԱԳԼՈՒԻՒ Լ.Տ. 2.500.000
ՏՐԱՍԱԴՐԵԼԻՒ » » » 2.250.000

ԱՆԳԼԱԿԱՆ ՈՍԿՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՍԻ
Կ'ապահովագրէ ամեն ճեսայ ապրանք եւ կաշուածք

Ընդհանուր գործակալ
ՄԱՐԹԱԸ ԵՂՔԱՐԲ
ՈՒԿԱՐԱՅ ԳԱՐՈՒ

ԹԵՆՏՈՐՈՍ ԲԱՍԽՆՈՒՑԻՍ

ՋՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՏԻԹՅԱՆ ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ

Ջրարուծութիւնը մարթը կը մաք-րէ, ա՛յ տաշնութիւնը կ'ընդարացնէ արեան չըջանը կը փուլթացնէ և մարմ-նոյն անդամաւորձ մասերուն ոյժ և առողջութիւնը կը պարզէ:

Հողանք ձձմրային } Երկամթիղմի հմր.
» — պարէզ }

տաք ու պաղտուշը կ'հիներու և այրելու համար առողջութիւն է:

Բէշխտիէ ճառէսի նոր փառան զէմ Ֆրանք փողոց թիւ 18-32:

Հազար ֆրանք տուածելու պատրաստ է, եթէ հատատել յաջողին թէ վնաս-սակար է առողջութեան համար տուչը:

ԴՊՐՈՑԱԿԱՆ նոր տարեշրջանի ամթիւ, հայերէն և ֆրանսերէն ա-մէն տեսակ դատարարներ զնիւու հա-մար դիմել՝ ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿ-ԵԱՆԻ, (51. Միլիոն Գաշիսի, Գեղեկաբ) Յանձնարարութիւնները կը կա-տարուին փուլթով և ճշտապահու-թեամբ:

Յանձնարարութեանց փոխարժէքը կանխիկ է:

Նոյն հասցիին պէտք է դիմել նաև՝ ունենալու համար հանրաձայնութիւն եր-զանք—դաշնակահար Պ. Յ. Սիման-եանի բողոք երաժշտական հրատա-րակութիւնները, մասնաւորապէս նոր հրատարակած Բաւլ Փորոսան ու Հա-յասանը:

Հատին գինն է 25 դր:

ՏՊ. Յ. ԳԱՐՔԻՆԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ

ՆԵՐԿԻՆ, ԿԱՆԱՆՑ ԵՒ ՏԳԱՅՈՑ

Հիւանդութիւններու

Նոր և նոր յոգնի բացի կիրակիէ ամեն օր Առաւօտ ժամը 10. 12 ին եւ կ'ետը 3-5. ՊԱՇՏՈՆԱՏԵՂԻՆ. — Հայոց բաղ Մտաւ փողոց թիւ 31.

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ Ե

ՇՈՒՏՈՎ ԼՈՍՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՎԱՐԴԳԷՍԻ

ՊՏՏԻՔԻ ՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ՝

Գ Ր Ք Ո Յ Վ Ը

ԳԻՆ 15 ՂՐՇ.

Հազարային դատարանին յանձնելով զայն, Ստորին—Նահանգաց կուսվա-րութիւնը տրամաբանական ընթացք մը ցոյց պիտի տայ այն ստորագրու-թեան, զոր դաշնագրին տակ դրած է Գերման կառավարութիւնը:

Գաղով այն անձերուն, որոնք պա-տերազմի օրէնքներուն հակառակ գործած ըլլալու ամբաստանութեան տակ կը գտնուին, 228րդ յօդուածը անոնց դատարարութիւնը կը յանձնէ զինուորական դատարաններու: Գեր-մանիա խոստացած է զանոնք յանձնել:

Լօյտ ձօրձ, դաշնագիրը հասարա-կաց խորհրդարանի սեղանին վրայ դը-նելով, անոր վիճաբանութեան միջո-ցին այնպիսի խօսքեր արտասանեց, որոնք բնաւ տարակոյտ չեն թողուր հաստատամտութեան վրայ: Այսպէս ուրիմ 227 և 231րդ յօդուածները ի-րենց ամբողջական գործադրութիւնը պիտի ընդունին: Պահանջուելիք յան-ցաւորներուն ցուցակը դաշնագրին գործադրութեան միտ մը յետոյ Գերմանիոյ պիտի յանձնուի: Ֆրանսա-երախտապարտ պիտի ըլլայ իր կու-սավարութեան, որ իր քարուքանդ ե-ղած հողին վրայ կ'էջի դաշնագրին պայմանները ստնակոխ ընող յանցա-ւորներէն և ոչ մին պիտի պրծի օրէն-քի ձեռքէն:

(Շար.)